Հավելված 2

Ընդերքօգտագործման տարածքում բուսական աշխարհի նկատմամբ դիտանցում

2022թ.-ին իրականացվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բացահանքի, դատարկ ապարների և Արծվանիկի պոչամբարի ափամերձ տարածքների բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն:

Ընդհանուր առմամբ 2022 թվականին ուսումնասիրվող տարածքներում դիտարկվել են 88 տաքսոն բույսեր, սնկեր և քարաքոսեր: Ուսումնասիրված տարածքների համար առաջին անգամ բերվում են մոտ 25 տաքսոն:

Բուսականության վիճակը բոլոր հատվածներում համարյա անփոփոխ է, միայն հանքի շահագործվող մակերեսների փոփոխության հետ միասին ավելանում են բուսականությունից ազատ մասերը, իսկ ազդեցության չենթարկվող հատվածները աստիճանաբար ծածկվում են պիոներ և մոլախոտային բուսականությամբ:

Թթու ջրի հարևանությամբ գտնվող հատվածում է աճում ՀՀ Բույսերի կարմիր գրքում ընդգրկված *Campanula zangezura* հազվագյուտ տեսակը, իսկ տարածքի վերին մասը ՀՀ-ի այն հազվագյուտ հատվածներից է, որտեղ անտառային վերին գոտին հասնում է ծ.մ. համարյա մինչև 2600 մ բարձրությունները:

Այստեղ 2022 թվականին դիտարկվել են 31 տաքսոններ, որոնցից 13-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետի համար, ընդ որում քարաքոսերի բոլոր տաքսոնները առաջին անգամ են հավաքվել այս հատվածից:

Քաջարանի շահագործվող հանքավայրի ուսումնասիրված եզրի GPS տվյալներն են՝ 39° 9'25.58"N, 40´´, 46° 7'1.43"E, Alt. 1951m - 39° 8'51.48"N, 46° 6'32.04"E, Alt. 2587m:

Ուսումնասիրված հատվածներում բուսականության էական փոփոխություն չի նկատվել:

Արծվանիկի արևմտյան հատվածում բուսականության կազմը բավականին խախտված է: Ձորակներում պահպանվել են ծառաթփային տեսակները, իսկ բաց տարածքները հիմնականում պատված են մոլախոտային ու երկրորդնային բուսականությամբ: Մեծ քանակ են կազմում ցաքու (*Paliurus spina-christi*) թփերը:

2022 թվականին այստեղ դիտարկվել են 24 տաքսոններ, որոնցից 7-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետի համար:

Արծվանիկի պոչամբարի արևմտյան ուսումնասիրված հատվածի GPS տվյալները՝ 39°14'33.42"N, 46°26'38.52"E, Alt. 983m.

Աճանան գետի հովտում՝ չորրորդ թունելի ելքի հատվածում ֆլորայի և բուսականության էական փոփոխություններ չեն արձանագրվել: Բավականին զարգացած է մոլախոտային բուսականությունը, ինչպես նաև գետահովտային ծառաթփային ֆլորան:

Այստեղ 2022 թվականին դիտարկվել են 26 տաքսոններ, որոնցից մոտ 10-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետի համար:

Նոր տեսակներից հայտնաբերվել են Թզենու և այլանթի մեկական երիտասարդ ծառեր չորրորդ թունելի Աճանան գետը լցվելու հատվածին մոտ: Այստեղ հայտնաբերվել է նաև ինքնացան կերպով աճած մշակաբույս՝ Cucurbita pepo (Դդում սովորական):

Չորրորդ թունելի ուսումնասիրված հատվածի GPS տվյալներն են՝ 39°13'49.24"N, 46°25'49.85"E, Alt. 787m.

Ջորաստան գյուղի շրջակայքի ստուգիչ կետի տարածքում դիտարկվել են 17 տաքսոններ, որոնցից 9-ը առաջին անգամ են բերվում տվյալ կետի համար: Այդ նոր տաքսոնները հիմնականում պատկանում են սնկերի թագավորությանը, որի հարուստ տեսակային կազմը թույլ է տալիս առաջարկել իրականացնել այստեղ հատուկ ուսումնասիրություններ, տեսակային կազմը պահպանելու և տարածքը որպես համեմատական՝ ստուգիչ արեա առանձնացնելու համար:

Նոր ծառատեսակներից հայտնաբերվել են *Crataegus pentagyna, Populus deltoids* և այլ տեսակներ:

Ստուգիչ կետի GPS տվյալներն են՝ 39°16'21.16"N, 46°22'21.27"E, Alt. 969m.

Ընդերքօգտագործման տարածքում կենդանական աշխարհի նկատմամբ դիտանցում

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների ածի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ
ՀՀ գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը							
Որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը Կողակ *Capoeta capoeta*, գետային	2021թ. Ողջի գետ՝ 49, Վաչագան գետ՝ 9, Ամանան՝ 3 առանձնյակ 2022թ. Ողջի գետ՝ 6, Վաչագան գետ՝ 21, Ամանան՝ 16	Տարածված է Ողջի և Ամանան գետում: Բնակվում է գետերի արագահոս վայրերում:	Քանակը աստիճանաբար նվազում է: Պոպուլյացիաները հիմնականում ներկայացված են 15-20, երբեմն մինչև 30 սմ երկարություն ունեցող առանձնյակներով:	Բազմացման համար շատ կարևոր են ավազապատ առափնյա տեղամասերը, որոնց առկայությունը սահմանափակ է: Միաժամանակ գետերի աղտոտվածությունը և հիդրոտեխնիկական շինությունները նվազեցնում են կողակի վերարտադրողական պոտենցիալը:	Բնակվում են փոքր վտառներով, սնվելով ստորակարգ ջրային բույսերով:	Գրանցված չէ Կարմիր գրքում:	Համարվում է բազմաքանակ ձկնատեսակ Ողջի գետում:
Կուրի բեղածուկ *Barbus cyri*, գետային	2021թ. Ողջի գետ՝ 77, Վաչագան գետ՝ 17, Ամանան 9 առանձնյակ 2022թ. Ողջի գետ՝ 15, Վաչագան գետ՝ 31, Ամանան՝ 10 առանձնյակ	Տարածված է Ողջի և Ամանան գետում: Բնակվում է գետերի արագահոս վայրերում	Քանակը համեմատաբար կայուն է: Պոպուլյացիաները հիմնականում ներկայացված են 12-15, երբեմն մինչև 25 սմ երկարություն ունեցող առանձնյակներով:	Բազմացման համար շատ կարևոր են գետի խճապատ և մանր քարեր ունեցող տեղամասերը: Գետերի աղտոտվածությունը և հիդրոտեխնիկական շինությունները նվազեցնում են բեղածկան վերարտադրողական պոտենցիալը:	Բնակվում են վտառներով, սնվելով հատակային անողնաշար կենդանիներով:	Գրանցված չէ Կարմիր գրքում:	Համարվում է սակավաթիվ ձկնատեսակ:
Արևելյան տառեխիկ *Alburnoides eichwaldii* գետային	2021թ. Ողջի գետ՝ 276, Վաչագան գետ՝ 249, Ամանան 66 առանձնյակ 2022թ. Ողջի գետ՝ 71, Վաչագան գետ՝ 316, Ամանան՝ 0 առանձնյակ	Տարածված է Ողջի և Ամանան գետում: Բնակվում է գետերի արագահոս և համեմատաբար դանդաղահոս վայրերում:	Բազմաքանակ ձկնատեսակ: Պոպուլյացիաները հիմնականում ներկայացված են 7-8, երբեմն մինչև 12 սմ երկարություն ունեցող առանձնյակներով:	Բազմացման համար կարևոր են գետի հանքարդյունաբերական թափոններից զուրկ լինել: Գետերի հիդրոտեխնիկական շինությունները նվազեցնում են տառեխիկի վերարտադրողական պոտենցիալը:	Բնակվում են փոքր վտառներով, սնվելով պլանկտոնային և հատակային մանր անողնաշար կենդանիներով:	Գրանցված չէ Կարմիր գրքում:	Համարվում է բազմաքանակ ձկնատեսակ:

Յամաքային անողնաշար և ողնաշարավոր կենդանիներ

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ
ՀՀ գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	*1.Telescopus fallax 1* *2.* Montivipera (Vipera) raddei) 1	Լեռնային և նախալեռնային, քսերոֆիտ բուսականություն: Քարքարոտ զառիվայրեր:	N/A	N/A	N/A	*1.Telescopus fallax* *2.* Montivipera (Vipera) raddei)	Հիմնականում բոլոր նշված տեսակները
Որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը							

Ընդերքօգտագործման տարածքում թռչունների նկատմամբ դիտանցում

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների աճի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրելիության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ և 2021թ. հաշվետվություն
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Քարարծիվ (*Aquila chrysaetos*), 1 հասուն առանձնյակ:	Մեկ զույգ բնադրում է Ողջի գետի կիրճում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս զույգի որսահանդակի մեջ:	Տվյալ զույգը ստաբիլ է 2009-2022 թթ ընթացքում:	Տվյալ զույգը ստաբիլ արտադրում է 1 ձագ 2009-2022 թթ ընթացքում:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չեր կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ 32-34 զույգ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021թ. հանդիպել է 1 հասուն և 1 դեռահաս առանձնյակ:
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Ցախաքլորա-որս (*Accipiter gentilis*), 1 հասուն առանձնյակ:	Առնվազն մեկ զույգ բնադրում է Մեղրու լեռների հարավային մակրո-լանդշաֆտում և առնվազն մեկ զույգ՝ Բարգուշատի հարավային մակրո-լանդշաֆտում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս զույգերի հետբնադրման շրջանում օգտագործվող որսահանդակների մեջ:	Տվյալ զույգերը ստաբիլ են 2003-2022թթ. ընթացքում:	Տվյալ զույգերի վերարտադրող-ության հաջողությունը չի ուսումնասիրվ-ել մինչ 2022 թթ:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չեր կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ 40-60 զույգ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին գրականության տվյալների վրա հիմնվելով (դիտարկում չի եղել), սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021թ. տեսակը չի հանդիպել:

Դիտանցման ենթակա օբյեկտ	Հաշվառում	Դրանց տարածվածության արեալը և բնակատեղին	Տեսակների ածի դինամիկան և կառուցվածքը	Վերարտադրե-լության գնահատումը	Ֆիզիկական վիճակի նկարագրությունը	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալներ	ՇՄԱԳ ելակետային տվյալներ և 2021թ. հաշվետվության
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Գառնանգղ (*Gypaetus barbatus*), 1 հասուն առանձնյակ:	Երկու զույգ բնադրում են Մեղրու լեռների հարավային մակրո-լանդում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս զույգերի որսահանդակների մեջ:	Տվյալ զույգերը ստաբիլ են 2003-2022 թթ ընթացքում:	Տվյալ զույգերը ստաբիլ արտադրում է 1 ձագ 2003-2022 թթ ընթացքում:	Դիտարկված առանձնյակը ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չեր կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ 11-12 զույգ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021թ. հանդիպել է 1 հասուն առանձնյակ:
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Բզակտուց (*Recurvirostra avocetta*), 6 առանձնյակ: Դիտարկվել է կոմբինատի աշխատա-կազմի կողմից, ամռանը:	Հայաստանի սահմաններում տեսակը բնադրում է Արարատյան դաշտում, դիտարկված տարածքներից հեռու: Դիտարկված տարածքները շատ հազվագյուտ են օգտագործվում տեսակի կողմից, որպես հանգստի վայր չուի կամ քոչելու ժամանակ: Այս տեսակի դիտակումն՝ ըստ նախնական եզրակացության, պատահականու-թյուն է, քան թե տարացքի մշտական օգտագործման արդյունք, սակայն դա ճշտելու համար անհրաժեշտ է մոնիթորինգ:	Տեսակի միտումն Հայաստանում, ըստ նախնական գնահատականի, ստաբիլ է 2003-2022 թթ ընթացքում:	Անհայտ է:	Դիտարկված առանձնյակները ոչ մի ֆիզիկական անառողջ վիճակի նշան չեր կրում:	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին՝ սակայն չեն պարունա-կում քանակա-կան տվյալներ:	ՇՄԱԳ ելակետային տվյալները չեն պարունակում տվյալներ տեսակի ներկայության վերաբերյալ 2021թ. տեսակը չի հանդիպել:
ՀՀ կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Կիսա-սպիտակավիզ ճանճորս (*Ficedula semitorquata*), տեսակը չի դիտարկվել, հավանաբար, ուշ սեզոնի պատճառով:	Տեսակը բնադրում է Բարգուշատի և Մեղրու լեռների անտառային գոտում, դիտարկված տարածքներից դուրս: Դիտարկված տարածքները մտնում են այս տեսակի հետբնադրման տարածման շրջանի մեջ:	Տեսակի թվաքանակը կրճատվում է:	Անհայտ է:	Կիրառելի չե	ՀՀ Կարմիր գրքի ելակետային տվյալները վերաբերվում են ՀՀ տարածքին:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021թ. հանդիպել է 1 հասուն առանձնյակ:
Որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիներ և դրանց ապրելու միջավայրը	Անտառային աղավնի (Columba palumbus), տեսակը չի դիտարկվել, հավանաբար, ուշ սեզոնի պատճառով:	Տեսակը ամենայն հավանականությամբ բնադրում է հետազոտված շրջանում, մասնավորապես Դարազամի լցակույտի շրջակա տարածքում և «Թթու ջրի» տարածքում:	Անհայտ է:	Անհայտ է:	Կիրառելի չե	Տեսակը ընգրկված չէ ՀՀ Կարմիր գրքում:	ՇՄԱԳ ելակետային տվյալները տեղեկացնում են տեսակի առկայության մասին, սակայն չեն մանրամասնում նրա թվաքանակը: 2021 թ. հանդիպել է 8 հասուն առանձնյակ: